# Տեղական Լուրեր

## Ցորենի արտածումին տուրքը կը պակսի

ԴԱՄԱՍԿՈՍ.— Ելմտական նախարարութիւնը աւարտեց ցորենի տուրքը թեթեւցնելու ծրագիրը եւ այս ուղղութեամբ որոշում մը առաւ։

Կը կարծուի թէ այս որոշումը դիւրութիւն պիտի տայ այն առեւտրականներուն որպէսզի կարենան մեծ քանակութեամբ ցորեն արտածել։

Կը կարծուի նաեւ թէ այս քայլը նոր եռուզեռ մը պիտի յառաջացնէ առեւտրական շուկային վրայ, որ երկար ատենէ ի վեր անշարժութեան դատապարտուած է։

## 1933Ի ԾՆՈՒՆԴՆԵՐԸ

ԴԱՄԱՍԿՈՍ.— Վերջնականապէս որոշուեցաւ, թէ 1933ի ծնունդները Հոկտեմբերի մէկէն սկսեալ զօրքի ծառայութեան պարտականութեան սկսին։

Առ այդ բոլոր անոնք որոնք հրաւէր ստացած են, պարտին որոշեալ թուականին ներկայ գտնուիլ, իրենց սահմանուած վայրերը։

Լիբանանի Ազգ. վիճակախաղութիւնը
Կ'ԻՐԱԿԱՆԱՑՆԷ ԵՐԱԶՆԵՐԴ
Մեծ պարգեւն է 50 000 Լիբանանեան ոսկի
Թիրաժը տեղի կ'ունենայ 3 Հոկտեմբեր 1953ին
Տոմսերը ապահովեցէք ընդհանուր ներկայացուցիչ՝
ԷՄԻԼ ՆԷՃԻՊ ՇՈՒՀԱՅԲԷՆ, Թիլէլ պողոտայ
Հեռաձայն 10617, ինչպէս նաեւ բոլոր վիճակահանութեան
Տոմս ծախողներէն

## Տխրունի

Շաբաթ 26 Սեպտեմբերին, Ալթունեան հիւանդանոցին մէջ իր մահկանացուն կնքեց Տիկին Մարի Գըլըճեան, 29 տարեկան ծաղիկ հասակին մէջ։

Յուղարկաւորութեան տխուր արարողութիւնը տեղի ունեցաւ Կիրակի 27 Սեպտեմբերին։

Մեր խոր վշտակցութիւնը։

* * *

Այս անբնական մահուան առթիւ, զանազան չշուկներ լսեցինք ինչպէս նաեւ Կիրակի օր խումբ մը սգաւոր կիներ խմբագրատուն ներկայանալով մեղադրեցին մեզ որ մամուլը լուռ կը մնայ այսպիսի դէպքերու առթիւ։

Խմբագրութիւնս անմիջապէս հետաքրքրուեցաւ այդ հարցով եւ Թղթակից մը ղրկեց հիւանդանոց տեղւոյն վրայ հասկնալու այս անբնական մահուան պարագաները։

Վաղուան թիւով կուտանք մեր թղթակիցին քաղած տեղեկութիւնները։

## Մահազդ

Տիկին Վանիտէ Տէօքմէճեան եւ զաւակունք
Տիկ. Լուսիա Տէօքմէճեան
Տէր եւ Տիկ. Գաբրիէլեան եղբարք
Եւ համայն ազգականներ

Սրտի անհուն կսկիծով կը ծանուցանեն դառնաղէտ մահը իրենց ամուսնոյն, հօր, եղբօր, մօրեղբօր եւ ազգականին՝

### Տիար Հրանդ Տէօքմէճեանի

Որ կնքեց իր մահկանացուն 28 Սեպտ. 1953 Երկուշաբթի կէսօրէ առաջ ժամը 10ին Ալթունեան հիւանդանոցին մէջ, 66 տարեկան հասակին։

Յուղարկաւորութեան տխուր արարողութիւնը պիտի կատարուի 29 Սեպտ. 1953, Երեքշաբթի կէսօրէ առաջ ժամը 10ին, Ս. Քառասնից Մանկանց Եկեղեցին, Սալիպէ Հալէպ։

* * *

Այս տխուր առթիւ, «Սուրիա» իր խոր ցաւակցութիւնը կը յայտնէ հանգուցեալին պարագաներուն։

ՄԽԻԹԱՐԵԱՆ
ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ
Հեռաձայն թիւ 13542-Հալէպ

Վարժարանս կը վերաբացուի 5 Հոկտեմբերին.

Արձանագրութիւնները կը սկսին 15 Սեպտեմբերին առաւօտ՝ ժամը 9-12 կէսօրէ վերջ ժամը 4-6։

Կ'ընդունուին ԳԻՇԵՐՕԹԻԿ եւ ՑՈՐԵԿՕԹԻԿ հայ աշակերտներ։

Վարժարանիս մէջ կ'աւանդուին հայ լեզուի եւ հայ պատմութեան հետ օտար լեզուներ — Արաբերէն, Ֆրանսերէն եւ Անգլերէն։

Վարժարանս կու տայ հայ ազգին առնմային դաստիարակութիւն եւ կը կերտէ հայ մարդը բարձր եւ ազնիւ նկարագրով։

Լաւագոյն միջոցներով կը պատրաստուին աշակերտներ ԱՐԱԲԱԿԱՆ ՍԷՐԹԻՖԻՔԱՅԻ ԵՒ ՊՐԷՎԷԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ։

Երեք տարուան մեր աշակերտներուն պետական քննութիւններուն մէջ ձեռք բերած նախանձելի յաջողութիւնը լաւագոյն ապացոյցն է վարժարանիս ուսումնական բարձր մակարդակին։

Գիշերօթիկներու ընդունելութեան պայմաններուն համար դիմել Վարժարանիս Տնօրէնութեան։

ՄԱՆԹԻ.— Վարժարանս ունի փոխադրական ինքնաշարժ կանոնաւոր սպասարկութիւն։

Հասցէ.— Collège Mékhtariste B. P. 951, ALEP Syrie

ՇԷԼ
ՊՈՒԹԱԿԱԶ
ՁԵԶ ԾԱՌԱՅԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՅԱՐԳԵԼԻ ՏԻԿԻՆ
ՓԱՍՏՈՒԵՑԱՒ, ՈՐ ՇԷԼ ՊՈՒԹԱԿԱԶԸ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ Է։

Նկատի առէք հետեւեալ առաւելութիւնները.—

- Իւրաքանչիւր ՊՈՒԹԱԿԱԶի շիշ կը պարունակէ 12,5 քիլօ կազ ✓
- Այլեւս ապահովագրութեան ծախսեր պիտի չունենաք, իւրաքանչիւր շիշի եւ ճնշման ժամացոյցի փոխարժէք 5 Սուր. Ոսկի նուազեցուեցաւ ✓
- Աւելորդ շիշ մը կարելի է ձեռք անցնել 15 Ս.Ո. փոխարժէքով ✓
- [illegible] ժամը 7.30 մինչեւ [illegible] ժամը 7ը, բացի Կիրակի օրերէն, որ [illegible] մինչեւ կէսօրէ վերջ ժամը մէկ ✓
- [illegible] ՊՈՒԹԱԿԱԶի գործածման ապահովութեան գլխաւոր սուրհանդակները ✓

5




[illegible]

ՇԷԼ ՊՈՒԹԱԿԱԶԸ
Կազ որ ձեր հանգստութեան համար անհրաժեշտ է։




«ՁՐՎ ԻՆԿ ԿԱՄ»
ակռայի դեղը

Իր նոր պատրաստութեան «Կլիսէրօ - Լօրաթ Աթօմիզէն» շնորհիւ յանձնարարելի է մասնաւորապէս մանուկներուն, ծխողներուն եւ ամէնուն ակռաներու եւ լինտերու առողջութեան համար։

ՀԱՃԻ ՄՈՒՀԱՄՄԷՏ
ԷԼ ՖԷԼԼԷՔԻ



ՖԱՔԻՐ—ՀԱՍՏԱՏԻՉ
ՄԱՍՆԱԳԷՏ ՔՆԱՑՆՈՂ ԵՒ ՈԳԵՀԱՐՑ
Քէլլէսէ Պզզոսայ, Կարօժ Խառուան
Հեռաձայնի թիւ 12271

## ՍԱԿԱՐԱՆ

ԹՂԹԱԴՐԱՄ

| | |
|---|---|
| Տոլար | 355 |
| Ստեռլին | 960 |
| Ֆրանսական 1000 Ֆրանք | 900 |
| Զուիցերիական Ֆրանք | 82,00 |
| Պելճիքական Ֆրանք | 6,50 |
| Եգիպտական | 850 |
| Յորդանանեան | 900 |
| Տինար | 950 |
| Թրքական | 65,00 |
| Լիբանանեան | 108,00 |

ՈՍԿԵԴՐԱՄ

| | |
|---|---|
| Անգլիական | 34,25 |
| Օսմ. Ռէշատի | 31,50 |
| Օսմ. Թիւնարի | 27,50 |

ՏՊԱՐԱՆ «ՆԱՅԻՐԻ»
ՀՈՎՀԷՏՈՒՆ - ՀԱԼԷՊ